ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA#

#
07.07.2016թ
287-9-ի

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարար պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Լոքյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ: Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի տասնմեկերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար ապահովվել է արդյոք ավազանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցները: Եթե այո, խնդրում ենք նշել յուրաքանչյուր համայնքի համար ֆինանսական միջոցների աղբյուրները և ներդրված գումարների չափերը:
2. Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր համայնքի համար ձեռք բերված տեխնիկասարքավորումների ցանկը և կայքերի պատրաստման ծառայությունների տեսակները:
3. 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող քանի՞ և ո՞ր համայնքներում են ստեղծվել համացանցային կայքեր, քանի՞սն են վերազինվել: Եվ արդյո՞ք ապահովվում է դրանց թարմացումը: Խնդրում ենք տրամադրել դրանց հղումները:
4. 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ, համաձայն ԲԿԳ 11-րդ պարտավորության, համայնքների համապատասխան աշխատակիցների համար քանի՞ դասընթաց է կազմակերպվել: Խնդրում ենք տրամադրել մանրամասն տեղեկություն դասընթացների վերաբերյալ՝ համայնք, վերապատրաստվողի հաստիքը, օրը, թեման:
5. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ապահովվա՞ծ են արդյոք բոլոր 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավազանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակումը:
6. Խնդրում ենք ներկայացնել նաև պարտավորության լիարժեք իրականացմանը խոչընդոտող խնդիրները և դրանց վերացման հնարավոր ժամկետներն ու ուղղված քայլերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ